№ 39 Մարտի 14 (26) 1879 Մարտի 14 (26) № 39

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թեմական տեսչութիւնը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Նիժից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագիրը հայոց հարցի մասին։ Անգլիա։ — «Մշակի» հեռագիրներ։ — Ցայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Հայ կինը։

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ

—

Ընթերցողները յիշում են, որ «Մշակի» անցեալ տարվայ համարների մէջ անդադար յարձակումներ էին տպվում Թեմական տեսուչ պ. Յ. Տէր-Յովհաննիսեանի վրա։

Այդպիսի մի շարք յօդուածներ գրեց պ. Մ. Մ., Թիֆլիսի Թեմի զանազան քաղաքներից և գիւղերից գանգատվում էին տեսչի վրա, որ նա չէ բաց անում նոր ուսումնարաններ, որ նա եղածներին չէ այցելում, մի խօսքով լաւ չէ կատարում իր տեսչական պարտականութիւնները։ Գրվեցան մի քանի յօդուածներ էլ խմբագրութեան կողմից, որոնց պատասխանելով պ. Յ. Տէր-Յովհաննիսեան զանազան գրողներին ծիծաղելի կերպով անուանեց ազգի փոքր և չնչին անդամներ իր համար պահելով մեծ անդամութեան պատիւը։

Որքան էլ ծիծաղելի լինէր Թեմական տեսչի պատասխանի այս մասը, այնու ամենայնիւ նա իր պատասխանի միւս մասով թուաբանօրէն հաստատեց, որ իրան անկարելի է օրինաւոր կերպով կատարել իր տեսչական պարտականութիւնը, քանի որ նա անկարող էր տարվայ ընթացքում գոնէ մի անգամ այցելել իւրաքանչիւր ուսումնարանին... և ճշմարիտ պատասխանից երևաց, որ Թիֆլիսի Թեմի ուսումնարանները այնքան բազմաթիւ են, որ եթէ տեսուչը սրտով էլ ցանկանար, չէր կարող նրանց այցելել, որովհետև ուսումնարանների թուի համեմատ տարվայ մէջ օրեր չը կան։

Այսպիսի մի իրողութեան դէմ մենք ոչինչ չունէինք ասելու, բացի այն, որ Թեմական տեսուչը պէտք է չը մնար իր պաշտօնի մէջ, պէտք է հրաժարական տար, քանի որ իրան անկարելի էր սրբութեամբ կատարել իր պաշտօնը, կամ պէտք է պահանջէր հողևոր կառավարութենից, որ իրան օգնական նշանակվի և բաւական ճանապարհածախս տրվի։

Պ. Տէր-Յովհաննիսեան մինչև ներկայ տարվայ մարտ ամիսը շարունակեց իր գործը առաջվայ պէս և նորերում միայն իր հրաժարականի հետ մի նախագիծ ներկայացրեց, որով պահանջում է Թեմական տեսչին օգնական նշանակել, աւելացնել Թեմական տեսչի թէ ռոճիկը և թէ ճանապարհածախսը և բացի այդ մի որոշ գումար նշանակել դիւանատան ծախսերի և գրագրի համար։

Թեմական տեսչի այդ պահանջները բոլորովին իրաւացի են։ Ոչ մի ազնիւ մարդ չէ կարող յանձն առնել այդ պաշտօնավարութիւնը ներկայ հանգամանքներով, որովհետև պէտք է ոչինչ չանել և իզուր ռոճիկ ստանալ, որովհետև գործել այդ դրութեան մէջ բոլորովին անկարելի է։

Թեմական տեսչութիւնը մեզ մօտ, ինչպէս երևում է, միայն ձևի և աչքին թոզ փչելու համար է։ Եթէ այսպէս չը լինէր, Թիֆլիսի Թեմական տեսուչը սրտիպված չէր լինի անգործ մնալ, իսկ Երևանի համար 24 դասերով ծանրաբեռնված պրոգիմնազիայի կրօնուսոյց վարդապետը չէր նշանակվի, իսկ միւս Թեմերը չէին մնայ առանց տեսչի։

Մեր կարծիքով այդ դրութիւնը պէտք է փոխել, կամ պէտք է օրինաւոր տեսուչներ նշանակել և նրանց գործելու միջոց տալ, կամ պէտք է բոլորովին վերացնել Թեմական տեսչութիւնը և հասարակութեան աչքին թոզ չը փչել։

Պ. Յ. Տէր-Յովհաննիսեան հրաժարական է տուել, հրաժարական է տուել նոյնպէս և Երևանի Թեմական տեսուչը. դրանցից յետոյ յոյս ունենք, որ ոչ մի ազնիւ մարդ չի ընդունի այդ պաշտօնը, մինչև որ տեսուչներին գործելու միջոց տրվի... Երկուսից մէկը՝ կամ եղածը օրինաւոր լինի, կամ բոլորովին չը լինի։

Ց. Տ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

—

«Կինը է այն առանցքը, որի շուրջը պտտվում է քաղաքակրթութիւնը։»

Ահա աղջիկը տանվեց և տան եօթն տարեկան է։ Այդ շատ վտանգաւոր մի հասակ է։ Նրա վրա հսկում է և մտածում է մայրը միայն. հայրը ուշադրութիւն չէ դարձնում, և կարելի է ասել, որ թշնամաբար է նայում նրա վրա, որպէս մի գող, որ վաղ թէ ուշ պէտք է նրա տունը կողոպտէր։ Աղջիկը դեռ բաւական ամօթխած է և երկչոտ. պէտք է «քացել» նրան, աշխարհ մտցնել։ Մայրը առաջնորդում է։ Սկզբում նրան թոյլ են տալիս կտուրի վրա, իր հասակակիցների հետ, ածել, «լէզգէվար» պար գալ և «տաշի» խփել։ Ցետոյ մայրը տանում է իր հետ, ուր և գնում է, երբեմն բարեկամների մօտ, երբեմն բազարը, երբ պէտք է մի նոր հագուստ գնել։ Լինում են և որոշված այցելութիւններ. օրինակ, շաբաթ երեկոները գնալ Բէթդեհէմ համբուրելու, այս և այն եկեղեցու տօնախմբութեանը (օբա) ներկայ գտնվել և այլն։ Դրանք մի տեսակ աշխարհահանդէսներ են, ուր աղջիկները զրվում են ցոյցի համար։ Երբեմն դուրս են բերում նրան հասարակաց զբօսարանի այգին, բայց թատրոն չեն տանում։ Շատ ծիծաղելի մի հակապատկեր է ներկայանում, երբ տեսնում ես մօրը, շատ անգամ փաթաթված սպիտակ «զադիփի» մէջ, ման է ածում վերջին մօդայի ձևով հագնված աղջկան։ Ցամաք փայտը նեցուկ են տուել դալար տունկին, որ չը ծռվի։

Տան մէջ աղջիկը բաւական համեստ է և գործունեայ. նա հագնվում է հասարակ կերպով, գլխին ծածկում է մի թաշկինակ, կամ բոլորովին բաց է թողում, աշխատում է խոհանոցում և չէ արհամարհում մինչև անգամ լուացք անել։ Այսպէս նա բաւական սովորում է տնտեսութիւն։ Միւս ժամանակներում, կամ կարում է և կամ հիւսում է։ Մօր դաստիարակութիւնը գլխաւորապէս կայանում է այն բանի մէջ, որ անընդհատ հսկում է նրա վրա։ Բայց նա այնքան անփորձ չէ, որքան կարծվում է։ Դպրոցում նա բաւական բան է լսել և սովորել. հարևանի աղջիկները ամեն գաղտնիք բացատրել են նրան։ Նա միայն ձևանում է, թէ ոչինչ չը գիտէ, և պահում է իրան, որովհետև համոզված է, թէ «կոտրած ամանը գին չի ունենայ», և պահպանում է իր անարատութիւնը, մինչև ամուսնութիւնը կը չնորհէր նրան ազատութիւն։ Շատ անգամ իրանք, մայրերը փչացնում են աղջկան, երբ նրա ներկայութեամբ, ուրիշ կնիկների հետ բաց են անում ամենակեղտոտ բամբասանքներ այս և այն աղջկայ վարքի մասին։ Ամեն ինչ ներշնչում է նորահաս աղջկայ մէջ պակվելու սաստիկ ցանկութիւն, բայց նա ակամայ թագցնում է, սպասելով իր դառն ճակատագրին։

Մեծ դժուարութիւններ կան արհեստաւորի, և առհասարակ ժողովրդի միջին դասի համար լաւ կերպով ապրելու աղջկայ ապագան։ Ծնողների դժգոհութիւնը չափը անցնում է։ Հայրը յանդիմանում է աղջկան, թէ իր համար պէտք է կատարեալ չքաւորութիւն պատճառէ, իսկ մայրը պաշտպանում է աղջկան։ Ամեն անգամ, ամեն մի նոր հագուստի գնելը մեծ աղմուկ է բարձրացնում ծնողների մէջ։ Աղջիկը հասկանում է իր վիճակի անտանելիութիւնը և երբեմն մահը օգնութիւն է կանչում։ Մայրը, որպէս կին, աւելի լաւ է հասկանում կնոջ պահանջը. որոնում է արժանաւոր փեսայ, ցանկանում է, որ նա հարուստ լինէր, կամ գոնեա ապահովված դրութիւն ունենար։ Հայրը ցանկանում է գցել առաջին հանդիպողի ձեռքը, միայն թէ ինքը ազատվի։ Ամենից աւելի շտապում են եղբայրները, եթէ կային հասած եղբայրներ. որովհետև մտածում են, թէ «քոյրը նրանց բախտի վրա էր նստել, մինչև նրան գլխից ռադ չանէին, իրանք չէին կարող պակվել։» Բայց մայրը աւելի փորձված է. նա աշխատում է ընտրութիւնների մէջ չը սխալվել։ Երբեմն գործի մէջ խառնվում է և սէրը։ Բայց նա ոչինչ հետևանք ունենալ չէ կարող եթէ մայրը աւելի գործնական կէտից չէ արտայայտում դատեր հոգեկան զգացմունքը։ Երբեմն գործը վերջանում է, բոլորովին յոյս դնելով յաջողութեան վրա։ Ցայտնվում է մի անծանօթ, որի ով և ինչ տեղից լինելը յայտնի չէ, և խնդրում է աղջկայ ձեռքը։ Ծնողները օգուտ քաղելով այն հանգամանքից, որ դա փող չէ պահանջում, կամ պահանջում է շատ չնչին բան, իսկոյն որսում են փեսային։ Այսպիսի ընտրութիւնները երբեմն վերջանում են սկանդալով. երբ իմացվում է, թէ նորափեսան մի քանի տեղերում պակված է եղել....

Թէ այսպէս և թէ այնպէս աղջիկը մարդու է գնում. ընտանիքի վրային ծանր բեռը բարձվում է։ Սակաւ անգամ նա տանում է իր հետ հինգ հարիւր կամ հազար ռուբլ. երբեմն միայն հագուստներ և մի քանի կարասիք։ Այդ չնչին գներով նա գնում է իր համար և չնչին փեսայ։ Հարսանիքի հանդէսից անմիջապէս յետոյ փեսան շարունակում է իր գործը, դիմում է խանութը կամ արհեստանոցը։ Եւ սկսվում է վաշտալի կեանքը։

Մանկահասակ կինը երբեմն լինում է լաւ տանտիկին, նայելով թէ որպիսի մարդի էր հանդիպել նա։ Սկզբում մայրը յաճախ այցելում է անփորձ աղջկայ մօտ, խրատում է նրան իր նոր տնտեսութեան այս և այն կարգադրութիւնների մէջ. ցետոյ փոքր առ փոքր մոռանում են նրան և բոլորովին ձգում են իր կամքին։ Այժմ մանկահասակ կինը թէև աղքատ է, բայց դարձեալ գոհ է, որովհետև ինքնազլուխ է։ Սկեսուրը, եթէ կենդանի է նա, չէ փոխարինում իր մօրը, չէ նեղացնում նրան, երբեմն ինքն է ծեծում պառաւին։ Նրա տնտեսութիւնը լինում է իր մօր տնտեսութեան կրկնութիւնը. մի և նոյն փոքրիկ և նեղ սենեակը, մի և նոյն անյարմարութիւնները տիրում են և այստեղ։ Ամուսին այրը «քաղաքի մարդ» է, առաւօտեան մութին գնում է խանութը և գիշերուայ մութին վերադառնում է տուն. նա ճաչում է խանութում, առանց կնոջ վրա մտածելու, թէ ինչ պիտի ուտէ։ Կիւրակէ օրերը միայն խոհանոցի օջախներում կրակ է ձգվում. ամբողջ շաբաթ կինը

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆԻԺԻՑ

—

27 փետրվարի

Այսպիսի մի երկրում, ինչպէս Ուտին է, այնպիսի մի ժողովուրդի մէջ, ինչպէս ուտիացիք են, ինձ վրա, կարծում եմ, մեծ պարտականութիւն կայ, որովհետև միջոց ունեմ կատարելու այն, ինչ որ մինչև այժմ ուրիշները չեն կարողացել կատարել...

Հետաքրքրութիւնը շատ անգամ տանում է ճանապարհորդներին Ափրիկայի խորքերը, սառուցեալ բևեռները հետազօտութիւններ անելու տեղական բնակիչների ու նրանց սովորութիւնների վերաբերութեամբ. Ես, զանազան հանգամանքներով մի այդպիսի ճանապարհորդ եմ կովկասի մի յետընկած տեղում: Կարացածիս չափ հետզհետէ ես կաշխատեմ կատարել իմ պարտականութիւնս, խօսելով այս երկրի մասին:

Ուտիացիները, իբրև մի հին պատմական ժողովուրդ, քրիստոնեայ են դեռ այն ժամանակից, երբ այդ կրօնի գաղափարը նոր էր տարածվում: Նրանք ունեցել են իրանց առանձին կաթողիկոսները, որոնք ձեռնադրուելիս են եղել մեր էջմիածնայ կաթողիկոսներից և սերտ յարաբերութիւնների մէջ եղել են սրանց հետ: Հինգերորդ դարի առաջին քառորդում դեռ ևս մեր ս. Մեսրոպը գիտութեան լոյսը տարածելու և քրիստոնէութիւնը ամուր պահելու մտքով Աղուանքում աշխատում էր գործակցութեամբ Երեմիա կաթողիկոսի: Այս ժամանակ էր, երբ նա գտաւ ուտիացիների համար գրեր—այբուբեն: *)

Անցան դարեր մէկը միւսի ետևից և աղուանների կաթողիկոսները, իբրև հովուապետներ և առաջնորդներ ժողովրդի, ոչինչ արժանայիշատակ գործեր չարեցին: Թէ պատմական անցքերը և թէ սրանց անհոգութիւնը ուտիացի—քրիստոնեաների թիւը պակասեցրին, որոնք շատ ու շատ պէտք է լինէին, քան թէ այժմ են: Վերջապէս աղուանների կաթողիկոսութիւնը վերջացաւ և էջմիածնի կաթողիկոսները 1828 թուականից իրանց ստորադրեալ հոգևորականներով սկսեցին հովուել նաև այս փոքրաթիւ ժողովուրդը: Բայց ինչ հովուել... Շատերը հոգևորականներից, մինչև անգամ զարմացմամբ են լսում այն պատմութիւնները, որոնք անում են ուրիշները: Այնքան քիչ ու ստոր հասկացողութիւն ունեն իրանց դաւանակիցների մասին.... Թողնենք այս:

Ուտիացիների պէս մի ժողովրդի մէջ, որ չըրջափակված է մահմետական ազգերով, պէտք էր գոնէ այնպիսի քահանաներ կարգել, որոնք կատարեալ հովիւ լինէին ժողովրդի համար: Բայց ընդհակառակը, տէր—Սահաթթաները անպակաս են լինում այստեղից: Միթէ, ասացէք խնդրեմ, մասամբ հոգևորականների մեղը չէ, որ Նուխու գաւառը այժմ լիքն են այնպիսի մահմետականներով, որոնք եղել են առաջ կամ ուտիացիք կամ բուն հայեր: Այդ մահմետականների ազգականներով և նրանց գիւղերում եղող գերեզմանատների քարերով կարելի է ապացուցել մեր խօսքերը: Շատ ու շատ կը գտնէք մահմետականներ, որոնք այսպիսի ազգանուններ ունեն. Հուսէյն Աստուածատուր—օղլի, Մահամմատ Քինիքեօր—օղլի (Գրիգորի—որդի), Քարիմ Մարտիրոս—օղլի և այլն..

Եւ դեռ ևս համաձակվում են քահանայացուին ձեռնադրելիս եկեղեցում ներկայ եղող ժողովրդին ասել, թող փչելով նրա աչքին «ես ինքս զգում եմ տիրացուի անարժան լինելը, բայց այն սուրբ պաշտօնը, որ տրվում է սրան, հաւատացած եմ, որ կը պարզի սրա միտքը» և այլն և այլն....

Բաւական է այն կորուստը, որ ունեցաւ այստեղի ժողովուրդը, զրկվելով քրիստոնէութենից, այդ լուսատու կրօնից. թող մտածէ մեր հոգևորականութիւնը աւելի լաւ հովիւներ կարգել այս կողմերում, քան թէ առաջ են եղել և այժմ կան:

Յովհաննէս—Հեթում

*) Թէ ինչ եղաւ այդ գրերի արդիւնքը և ուր մնացին նրանք, յայտնի չէ իսկապէս: Միայն այժմ Նիժից դէպի արևելք 10—15 վերստ հեռու ընկած «Գեաուր-ղալայ (Անհաւատներիամրոց) անուանված աւերակների քարերի վրա երևում են գրեր: Հաւանական է, որ այդ անմեկնելի գրերի հեղինակը լինի նոյն ինքն ս. Մեսրոպը: Ես հարկաւոր դիպուածում կը խօսեմ առանձին «Գեաուր-ղալայի» մասին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ այդ քաղաքից Աշտարակ գիւղը տանող ճանապարհը շատ անապահով է աւազակներից: Նորերումս այդ ճանապարհի վրա երկու մարդ են սպանել:

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Այստեղ դիտաւորութիւն կայ մի հայ ներկայացումն տալ յօգուտ «Արարատեան ընկերութեան»: Մի քանի ժամանակ է երեխաների մէջ տարածված է կարմրուկ հիւանդութիւնը: Բժիշկի պակասութիւնը չափազանց զգալի է: Քաղաքացի բժիշկը ամեն դասակարգից հիւանդներին է այցելում»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԴԻ ազգային-հոգևոր ուսումնարանի համար հարկաւոր է ռուսաց լեզուի մի ուսուցիչ: Ռոճիկը նշանակված է տարեկան 500 ռուբլ: Ցանկացողները պէտք է դիմեն ուսումնարանի հոգաբարձութեանը և ուղարկեն ուսման վկայագիրը:

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ մեզ գրում են. «Կովկասեան սարերով եկած ճանապարհորդները տխուր լուրեր են բերում: Սարից փուլ եկած ահագին քանակութեան ձիւնը ծածկել է իր տակ մօտ 80 կօղակներ և 4 ֆուրգօն: Ձիշդ տեղեկութիւն ստանալուց յետոյ կը հաղորդեմ մանրամասները: Քաղաքիս իրաւասուները ընտրվեցան և հաստատվեցան կառավարութենից: Մարտի 4-ին նոքա երդվեցան և օրերումս կընտրեն քաղաքագլուխ»

—

Սատացանք 10 ռուբլ յօգուտ «Արարատեան ընկերութեան» պ. Յովհաննէս Գրիգորեան Լոմինեանից: Պարոնը պարտաւորվում է իւրաքանչիւր տարի նուիրել յիշեալ ընկերութեանը նոյնքան գումար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՑՈՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Արևելեան հարցը սկսվում է և վերջանում երեք շրջաններով. յունական, սլավօնական և հայկական: Լրացնելով առաջին երկու պերիօդները, նա մտել է այժմ հայկական պերիօդը: Յոյների և սլավօնների համար բաց է արդէն ասպարէզը. նրանց համար հարթած է այն ճանապարհը, որով կարող են ընթանալ առանց ուրիշների օգնութեան դէպի զարգացում և յառաջադիմութիւն: Եւրօպան, մանաւանդ Ռուսաստանը, կատարեցին նրանց համար ինչ հարկաւոր էր և հնարին, տաճկի ձեռքից լիովին ազատվելը կախված է այսուհետև նրանց իրանցից: Իսլամական լծի հիմքը եւրօպական քրիստոնեաների համար արդէն խախտված է, հերթը հասել է այժմ Փոքր-Ասիայի քրիստոնեաներին—հայերին:

Փոքր-Ասիայի այն մասը, որ սահմանակից է այժմ Ռուսաստանի հետ, եղել է հնուց Մեծ-Հայաստանի մի կողը: Այդ երկրում բնակվողները հիմայ էլ գլխաւորապէս են նոյն իսկ նորա վաղեմի տիրապետողները—հայերը, փոքր մասով էլ նորաեկ քիւրդերը: Հայերը, թւով աւելի քան չորս միլիօն ժողովուրդ բընակվում են իրանց մայրենի հողի վրա, կազմելով բազմամանութիւն ոչ թէ միայն բուն Հայաստանում, այլ ևս Փոքր-Ասիայի արևելեան կողմը և հիւսիսային Միջագետում: Իսկ Անատոլիայի միւս տեղերը, ինչպէս և Եգիպտոսում հայերը բնակվում են առանձին ու անխառ համայնքներով:

Բացի թուական առաւելութիւնը, ամբողջ Փոքր-Ասիայի մէջ հայերն են կազմում միայն աշխատաւոր և առաջադէմ տարրը. նրանց ձեռքին է գտնվում բոլոր ներքին առևտուրը, նրանք են գլխաւորապէս և արտաքին վաճառաշահութեան վարողը: Ամենալաւ վարժարանները Փոքր-Ասիայում հայերինն են, ամենալաւ լրագիրները՝ հայերինը. հայերից յայտնվում են ոչ թէ միայն տաղանդաւոր մարդիկ պետութեան զանազան վարչական մասերի մէջ, այլ նրանցից դուրս են գալիս այնպիսի անձինք որ իրանց առաջադիմութեամբ գիտութիւնների և արուեստների մէջ Եւրօպայում անգամ հուչակաւոր անուններ են վաստակում:

Հայերը պատկանում են աշխարհի ամենահին քրիստոնեայ ազգերին: Կորցնելով քաղաքական անկախութիւնը և չը նայելով բռնաւորների ամեն տեսակ հալածանքներին և նեղութիւններին, հայերը պահել են ազատ իրանց կրօնը, եկեղեցին և հոգևոր իշխանութիւնը, որի բարձրութեան վրա կանգնած է ծայրագոյն կաթողիկոսը ամեն հայերի, ուենալով իր գահը էջմիածին: Հայերի բոլոր աշխարհահայեացքը, բոլոր տեսակէտը, մասնաւոր և հասարակական յարաբերութիւնները որոշվում են միայն կրօնով. հայը ամեն բանի վրա նայում է և ամեն ինչ չափում միայն կրօնական աչքով. կրօնը և եկեղեցին փոխարինել է նրա համար նրա պատմական անկախ կեանքը և նրա ազգային ոյժը:

Ռուսաստանի յաղթանակները արևելքում ամեն ժամանակ ջերմ համակրութեամբ են յայտնվել հայերի սրտի մէջ. հայերը համակրել են Ռուսաստանին ինչպէս քրիստոնեայ և մարդասէր տէրութեան, վասնզի երբէք չեն խնայել ամեն միջոցներ նրա ծաւալման, նրա քաղաքականութեան և զէնքի յաջողութեան համար: Իսկ երբ էջմիածինը, այդ հայոց անմահ Երուսաղէմը անցաւ Ռուսաստանի սահմանները, հայոց բարոյական և կրօնական կապերը Ռուսաստանի հետ աւելի ևս ամրացան և ստացան աւելի որոշ ձև:

անց է կացնում ցամաք հացով: Ոչինչ այնքան սարսափելի չէ լինում, որպէս թագնված աղքատութիւնը, որը դրսից հրապուրիչ երևոյթ ունի, բայց ներսից մաշում է ընտանիքի կեանքը:

Օրերը անցնում են օրերի ետևից, միատեսակ և անգործ կեանքը սկսում է ծանրանալ մանկահասակ կնոջ սրտի վրա: Ցանը նա ոչինչ պարապմունք չունի, ոչինչ չէ զբաղեցնում նրան: Անգործութեան մէջ զարթնում են բոլոր ախտերը: Պէտք է մի բանով զբաղվել և վերջապէս զուարճանալ: Իր հօր տան մէջ նա մի կողմից երջանիկ էր. մայրը մանր էր ածում նրան, ցոյց էր տալիս աշխարհին: Մայրը նրա համար մի լաւ ընկեր և բարեկամ էր: Այդ կարեկցութիւնները նա չէ գտնում իր աղամարդի մէջ: Սառնութիւնը առաջ է գալիս ինքն իրան: Միջին դասի մարդիկը սովորութիւն չունեն զբաղեցնել իրանց կնիկներին. դուք չէք տեսնի նրանց միասին փողոցում, կամ որ և իցէ զբօսանքի տեղում: Մանկահասակ սիրտը սնունդ է պահանջում: Սկզբում նա տանից դուրս է գալիս իր հարևան կնիկներից մէկի հետ. յետոյ—մենակ. Այդ առաջին քայլն է, որ տանում է նրան դէպի մոլորութիւն: Ամուսին այրը տան մարդ չէ, նա չի էլ կարող գիտենալ, թէ կինը ինչպէս է անցկացնում իր օրը: Նա ամբողջապէս խրված է իր բազարային գործերի մէջ, կնոջ վրա չէ մտածում: Կինը դառնում է խորամանկ և խիստ վարպետութեամբ տանում է իր գործը: Նա գիտէ մարդու որոշված ժամերը, երբ բազարից տուն է դառնում. և սկսում է կեղծաւորվել նրա առջև, խաբել նրան: Ի հարկէ, կինը չէր ընկնի այդ փորձանքների մէջ, եթէ նրա կեանքի պայմանները ուրիշ տեսակ կարգադրված լինէին: Նա մտաւ ամուսնի տունը, որպէս անմեղ և անարատ աղջիկ, բայց դուռ այնտեղ կատարեալ դատարկութիւն: Նրան գործ չը տուեցին, նրան չը զբաղեցրին.—աշխատութիւնը կարող էր փրկել նրան, բայց այդ չը կար: Անգործ և արձակ կեանքի մէջ աճեցին զգայական ախտեր: Բայց կայ ևս մի ուրիշ բան, որ դնում է կնոջը մոլորութեան ճանապարհի վրա: Սարսափելի հետևանքներ ունեն կեանքի ահագին պէտքերը, երբ նրանց բաւականութիւն տալու միջոցները սուղ էին: Կինը առաջին զոհն է դառնում աղքատութեան, որովհետև աւելի հակումն ունի դէպի պերճասիրութիւն և առհասարակ շռայլութիւն: Գաւառացի կինը բախտաւոր է այդ դէպքում. այնտեղ կեանքի պահանջները թեթև են. բացի դրանից, դեռ ևս տիրող արևելեան փակ կեանքի չնորհիւ կինը կարողանում է իր աղքատութիւնը թաքցնել տան չորս պատերի մէջ, նրան չեն տեսնում: Բայց այստեղ կեանքը աւելի արձակ է. կինը պէտք է իրան ցոյց տայ աշխարհին, իսկ աշխարհը սիրում է նրան տեսնել միշտ զուքուած, զարդարված: Ես վկայ եմ եղել մի քանի թշուառ դէպքերի Թիֆլիսում, թէ որպէս կինը, սկզբում բոլորովին անարատ և մաքուր վարքով, հանդամանքներից ստիպուած, ընկել է ապականութեան մէջ: Նա աւելի բարեյաջող պայմաններում կարող էր պահպանել իր բարքի մաքրութիւնը:—Միանգամ ընկաւ նա, այլ ևս իրան պահել չէ կարող. գլորվում է դէպի ցած և ցած. կեանքը ետևից մղում է նրան դէպի ամօթալի կործանումը, մինչև բոլորովին խրում է ցեխի մէջ: Նոյն ցեխի մէջ և մեռնում է նա:

Անարդարութիւն կը լինէր բոլորովին սև գծերով վերջացնել իմ նկարագիրը Թիֆլիսի միջին դասի կանանց մասին. ես պէտք է ամբողջացնեմ իմ պատկերը, ձգելով նրա վրա մի քանի լուսաւոր շուքեր:

Լինում են և բաղդաւոր ամուսնութիւններ: Մանկահաս կինը իր երթում դառնում է մայր: Եթէ նրա առաջին ծնունդը աղջիկ էր, դա աւելի շուտով ներշնչում է նրա մէջ այն խելամտութիւնը, թէ պէտք էր մտածել երեխայի ապագայի մասին: Իր անցեալ վշտալի կեանքը թողել է նրա մէջ փորձերի մի ամբողջ շարք. նա գիտէ, թէ ինչ դժուարութիւններով ինքը կարողացաւ պակվել, կին դառնալ: Նոյն դժուարութիւնները սպասում են և նորածին մանկան: Եւ այն օրից սկսում է տնօրինել իր զաւակի օժիտը: Եթէ նրա առաջին ծնունդը տղայ էր, դարձեալ գիտէ, որ նրա կրթութիւնը սակաւ հոգսեր, սակաւ ծախսեր չէ պահանջում. պէտք է դպրոց տալ և մի բան սովորացնել: Եւ այսպէս, խնայողութիւնը ընտրում է նա որպէս գլխաւոր օրէնք իր փոքրիկ տնտեսութեան մէջ: Նա այնքան խելացի է լինում և այնքան բարոյական ոյժ է ունենում, որ բոլորովին «իր ձեռքն է առնում» տղամարդին: Երբեմն յետ է պահում նրան չդայլ կեանքից կամ խմելուց, թելադրում է «փող յետ դցել» Իր հասարակական դրութիւնը, ի հարկէ, չէ ներում, որ ինքն էլ մի կողմից օգնէր ամուսնին հարստանալու նպատակի մէջ և բաղարումը նրան գործակից լինէր: Պատերազմելու համար ընդունված նախապաշարմունքների դէմ՝ դեռ անզօր է նա: Բայց տան մէջ ամենայն եռանդով աշխատում է: Ամբողջ գիշերները նա անց է կացնում ասեղով. բացի մասնաւոր կարերից, որ ընդունում է հարուստների տիկիններից, նա վեր է առնում կարելու հագուստներ և մօդային մագազիններից,—բոլորը պատրաստում է տանը: Ոչ մի շորի կտոր անպէտք չէ կորչում նրա ձեռքում. ամեն մի հնոտիք շուռ է տալիս, ձեր փոխում է, և վերջապէս նրանից մի նոր հագուստ է պատրաստում իրա կամ երեխաների համար. Ափսոս, որ ժրաջան կնիկների տնային աշխատութիւնների պրոգրամման շատ ընդարձակ չէ.—կարել, հիւսել, նախշել—այսքանով վերջանում է նրանց գործունէութիւնը: Այսու ամենայնիւ, ես տեսել եմ կնիկներ, որ կարելով մի ամբողջ ընտանիք էին պահում. տեսել եմ աղջիկներ որ կարելով փող էին աշխատել, իրանց համար օժիտ պատրաստել, որ մարդու գնան: Ժրաջան կինը այնքան թեթևացնում է իր ամուսնի հոգսերը, որ նա չը գիտէ, թէ ինչպէս է առաջ գնում փոքրիկ տնտեսութիւնը. երեխաները միշտ մաքուր են և առողջ, և ամեն ինչ տան մէջ կարգին է: Ամենաանակնկալ հիւրեր պատահելիս, միշտ տանտիկինը պահած ունի առատ պաշար նրանց զարմացնելու համար: Տան մէջ ամեն բան կայ, ոչինչ պակաս չէ. և գլխաւորն այն է, որ մեծ մասը գնել է ու պատրաստել է կինը: Երբ կինը իր նիւթական օժանդակութիւններով օգնում է ընտանիքին, նրա բարոյական ազդեցութիւնը աւելի կշիռ է ստանում: Այն ժամանակ նա մտնում է իր ուղիղ դերի մէջ, դառնում է քաղաքակրթող տարր, եթէ ոչ դրսի աշխարհի մէջ, գոնեա իր ներսի աշխարհում—ընտանիքի մէջ:—

Կրկնում եմ, դպրոցը, միայն դպրոցը չէ կարող բարձրացնել ժողովրդի միջին դասի կնոջ նշանակութիւնը: Ապրուստը այստեղ կապված է ծանր կենսական անհրաժեշտութիւնների հետ, որ պահանջում են կնոջ գործակցութիւնը:—Պէտք է ընդունակ կացուցանել նրան գործելու, աշխատելու, և իր ձեռքի վաստակով կերակրե-

Ռուսաց տիրապետութեան մէջ է գետեղված հայոց սրբութեան աթոռը, Ռուսաստանումն է լինում ևս նրանց վեհափառ քահանայապետը, որի կրօնական իրաւասութիւնը սըրբասուրբ յարգում է իր ազգը արդէն 15 դար։ Ցայտնի է ևս ինչ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին հայերը մեր զօրքերին այս վերջի պատերազմի ժամանակ. նրանք նուիրեցին մեզ իրանց տան վերջի պաշարը, բաժանեցին սոլդաթների հետ իրանց բերանի վերջին պատառը, սփոեցին մեր առաջ բոլոր հիւրասիրութիւնը, թէպէտ քաջ իմանալով որ այդպիսի համակրութիւնը մահաբեր հետևանքներ կարող է ունենալ յետոյ իրանց համար, բայց հայերը արհամարհեցին բոլոր սպառնալիքը, բոլոր թշուառ հետևանքները յանուն իրանց սիրոյ և հաւատարմութեան դէպի մեզ։ Ցայտնի է ևս, որ մեր զօրքերը յետ դառնալու ժամանակ, հայերը ահագին բազմութեամբ տուն ու տեղ ձգած, կայքից ու հողից ընկած, վազել են աղի արտասունքով Ռուսաստանի սահմանները, որովհետև նրանց Մեսը իրանց հայրենիքում անհնարին է եղել սրի կոտորածների ահու սարսափից։ Եւ այս ամենը կրկնվել է ամեն անգամ, երբ մեր զօրքերը մտել են ու թողել Հայաստանը տաճկական պատերազմի ժամանակ։—

Հայերից միանգամայն տարբեր և նրանց հակառակ տարբեր կազմում են Փոքր-Ասիայում ստանդական և վրանաբնակ ազգերը, ինչպէս քիւրդերը, չերքէզները և միւս մուսուլման ցեղերը։ Սրանք բոլորը ներկայացնում են մի վայրենի և բիրտ ոյժեր, որ ուրիշ բան չեն անում, բացի միայն խանդարելու և վնասելու հայոց կեանքի խաղաղ քաղաքական զարգացման։ Էլ աւելորդ է յիշելը, որ այս ազգերը եղել են և միշտ էլ կը մնան անհաշտ թշնամի Ռուսաստանին, ինչպէս մուսուլմանական ազգեր քրիստոնեայ տէրութեան։

Ուրեմն այս երկու ազգերից որի վրա կարող ենք դնել մեր յոյսը։ Որն է գրանցից Ռուսաստանի բարեկամը և որն է նրա թշնամին—քրիստոնեայ հայը, թէ մահմետական քիւրդը։

Ո՛չ թէ միայն այժմ են առաջարկվել և պարզվել այս տեսակ հարցերը, այլ 150 տարի մեզնից առաջ, երբ Մեծ Պետրոս հրատարակելով իր ուկազը նոյեմբերի 10-ին 1724 թուականին ասեց. «Մենք ընդունեցինք այդ հայկական ազգը մեր սեպուհ կայսերական խնամքի և հովանաւորութեան ներքոյ։»

ԱՆԳԼԻԱ

—

Անգլիական հասայնքների ժողովը իր այս վերջին նիստերից մէկում զբաղվեցաւ այն հարցով, որ պ. Կուրտնէ առաջարկել էր ժողովին. այդ հարցի նպատակն այն էր, որ կանայք էլ իրաւունք ունենան ընտրողական ձայն ունենալ, ուրիշ խօսքով ասած, որ նրանք էլ ազատ իրաւունք ունենան տղամարդիկների պէս քուէարկութիւններին մասնակցելու։ Այս հարցը վաղուց է, որ հետաքրքրում ու զբաղեցնում է շատերի միտքը, և այս առաջինը չէ որ անգլիական պարլամէնտը յուզված է այսպէս իր ազատամիտ կուսակցութեան մի քանի յառաջադէմ անդամներով։ Զը նայելով, որ մենք որչափ ջերմ եռանդով համակրում ենք կանանց իրաւունքի հաւասարութեան սկզբունքին, այնու ամենայնիւ թող թոյլ տրվի մեզ փակագծում նկատել, որ կանանց իրաւունքի հաւասարութենից առաջ, անգլիական պարլամէնտը թող դեռ իրաւունքի կատարեալ հաւասարութիւն տայ իր այն քաղաքացիներին, որոնք Լօնդօնի բազմաթիւ փողոցներում սովամահ են լինում։

Ամեն կողմից տաք տաք վիճաբանութիւններ էին անում. մի քանիսը անասելի եռանդով պաշտպանում էին այդ հարցը, մի քանիսը հերքում։ Կարող էք ձեզ երևակայել թէ ինչ կը լինէր մի հարցի յաջողութիւնը, երբ դրա դէմ է համաշխարհական կարծիքը, երբ դրա դէմ են կառավարութիւնը և պարլամէնտի գրէթէ բոլոր գոյնի կուսակցութիւնները, և վերջապէս երբ դրա դէմ են և նոյն իսկ պաշտպանող կուսակցութեան մի քանի առաջադէմ անդամները, որոնց թւում և պ. Ֆօրստէր, որ յայտնի է իբրև ամենաազատ սկզբունքի տէր մարդ։ Այսպէս ամեն կողմից յարձակվելով, պ. Կուրտնէի առաջարկութիւնը ձայների ահագին առաւելութեամբ մերժվեցաւ։ Զը նայելով այս բոլորին, այնու ամենայնիւ այդ հարցը 103 սպիտակ քուէ ստացաւ։

Այս մի և նոյն օրը ժողովում կարդացվեցաւ Վիկտորիա թագուհու բելգիացոց Լէօպոլդ թագաւորին ուղղած նամակի այն կտորը, որը խսկապէս այս հարցին էր վերաբերում, և որը հերքում է կանանց քաղաքական ընդունակութիւնը։ Այդ կտորի ընթերցումը ահագին աղմուկ բարձրացրեց ժողովում։

Կապից (Ափրիկայում) ստացված վերջին լուրերը հաղորդում են, որ Տուջելա գետի ջրերը իջնելուց յետոյ, Զուլուսները, թւով մօտ երեք հազար անցան գետը, և յարձակվեցան թշնամու սահմանների վրա։ Անգլիական զօրքերը պաշտպանում են հակառակ եզերքները։ Սէտիվայո ինքն անձամբ ընդունեց այս զօրքերի հրամանատարութիւնը և մրտքումը դրել է անպատճառ գրաւել Նատալը։

Ստանջերում զուլուսները գիշերով վրա տուին անգլիական ամրոցներին, բայց նրանք կրկին յետ մղվեցան. լուսադէմին թշնամու հետքն անդամ չէր երևում։ Միւս օր անգլիացիք իրանք յարձակվեցան թշնամու սահմանների վրա, բայց նրանց բոլորը յոյսը զուր եղաւ, որովհետև նրանք Տուջելայի եզերքները ամուր պաշտպանված գտան։ Ասում են, որ զուլուսները մի անգամ նուաճած տեղերը շատ լաւ են պաշտպանում, յետ քաշվել չեն սիրում։

«Indép» Belge» լրագիրը հաղորդում է, որ մարտի 8-ին գիշերը Լօնդօնի Բազմարուեստեան դպրոցը հրդեհին զոհ գնաց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԷՏԼԵԱՆԿԱ, 8 մարտի։ Բժշկապետ Էյխվալդ գտաւ այստեղ Վէտլեանկայի հանգուցեալ քահանայի ժանտախտի մասին արած գրագրութիւնները և մի քանի նկատողութիւններ. այս թղթերը Վէտլեանկայի ժանտախտի ճգնաժամի պատմութեան վրա մի նոր լոյս են ձգում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Լօրիս-Մէլիքով խօսել է Ֆինանսների մինիստրի հետ, որ Աստրախանի նահանգի գաւառական դանձատների, և Աստրախանի ու Ցարիցինի կայսերական բանկի բաժանմունքի հնացած թղթադրամները փոխվեն և նրանց տեղը նորերը տրվեն, որովհետև այդ թղթադրամները գործադրվելով այդ նահանգների ձկների առևտրական գործերում, ծրծվել են ձկան հոտով։

ՎԷՐԺԲՈԼՕՎԱ, 10 մարտի։ Իշխան Բարեատինսկու մարմինը հասաւ այստեղ, վաղը կը շարունակի ճանապարհը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մարտի։ Այսօր Լօրիս-Մէլիքով հասաւ Վէտլեանկա, նոր հիւանդութիւններ չը կան։ Բժշկապետ Էյխվալդ կրկին վերադարձաւ Վէտլեանկա։ Մասնաժողովի բժիշկները անհրաժեշտ համարեցին 6—7 տուն այրել, որոնց արժողութեան գումարը հասնում է 45 հազար բուբլու։

ՕԴԷՍԱ, 11 մարտի։ Վարնայից «Կոնստանդին» շոգենաւով շտաբի հետ հասաւ այստեղ գեներալ Տօտլէբէն. նրան հանդիսաւոր ընդունելութիւն արին։

ՎԻԷՆՆԱ, 12/24 մարտի։ Աւստրիական Բէյլսպատի պատգամաւորների ժողովը ընդունեց ոսկէ բանաի հրատարակութեան օրէնքը։ Առևտրական մինիստրը յայտնեց կառավարութեանը Սերբիայի հետ ունեցած առևտրական բանագնացութիւնների այն դաշնագրի մասին, որը վճռական կերպարանք ստացաւ և որի մասին յոյս կայ, որ բարեյաջող հետևանքներ կունենայ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ $96^7/_8$ ր., երկրորդ $96^3/_8$ ր., երրորդ 95 ր. 75 կ., չորրորդ 96 ր., ներքին 5% փոխառութեան առաջին տոմսակը արժէ 238 ր. 50 կ., երկրորդ 234 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 93 ր. 50 կ., երկրորդ 93 ր. 50 կ., ոսկի 8 ր. 41 կ։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ $23^7/_{16}$ պէնս։ Տրամադրութիւնը ամուր է, յետոյ թոյլ։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

լու իր զաւակները։ Ես հեռու եմ պահում ինձ այն ծայրայեղութիւններից, որ կինը բժիշկ լինէր, գրող լինէր, կամ դատաւոր լինէր,—այլ աւելի կը ցանկանայի, որ նա մի լաւ խանութպան կամ լաւ տանտիկին լինէր։ Ոչինչ այնպէս յետ չէ պահում կնոջը կործանումից, որպէս արդար և ջանասէր աշխատութիւնը։ Քանի որ մենք կը նայենք կնոջը, որպէս մի հեշտասիրութեան առարկայի վրա, այնքան կը ստորացնենք նրա բարձր նշանակութիւնը։ Կինը որպէս բաժանում է իր ամուսնի սէրը, այնպէս էլ բաժանորդ պէտք է լինի նրա աշխատութեանը։ Մեղաւորը տղամարդն է, որ նրան գործ չէ յանձնում։ Ո՞վ կարող է լինել այնքան հաւատարիմ հաշուապահ կամ գործակատար մի մանրավաճառի խանութում, որպէս իր կինը։ Լաւ կինը մի մեծ երաշխաւորութիւն է առևտրական ֆիրմայի համար. ոչ ոք նրա նման չէ կարող գրաւել և գոհացնել յաճախորդներին.—այսքանս բաւական է, որ տղամարդիկ այնքան շատախօս և ժլատ չեն լինում, երբ մի բան գնում են կնոջից։ Ով կարող է այնպէս լաւ կառավարել մի կօշկակարի արհեստանոցը, որպէս վարպետի կինը։ Ես ճանաչում եմ մի կօշկակարի կնոջ միայն, որ իր ամուսնի հետ ապրում էր խանութում։ Նա պատրաստում էր կօշիկների երեսները. կարի մեքենան բաւական հեշտացրել էր նրա գործը։ Առևտուրը ընթանում էր արագ և արդիւնաւոր կերպով, և խաղաղ ու բախտաւոր ապրում էր փոքրիկ ընտանիքը։ Մինթէ կինը չէր կարող գործ գտնել իր դերձակ ամուսնի խանութում. կարը իսկապէս կնոջ գործ է։ Ինչ անէ կինը, երբ նրան անգործ ձգում են տանը և թող են տալիս անձնատուր լինել իր կրքերին։ Տուեցէք նրան աշխատութիւն և նա չի ընկնի բարոյական փտութեան մէջ։ Աշխատութեան մէջ միշտ թարմ և զուարթ կը պահվի նրա սիրտը։ Եթէ Թիֆլիսում միջին դասի կինը անկման վիճակի մէջ է, ես գլխաւոր պատճառը գտնում եմ նրա անգործութեան մէջ։ Այդ դասը դեռ բոլորովին փչացած չէ, կարելի է բարձրացնել նրան, միայն պէտք էր կնոջ համար պարապմունք գտնել։ Ես գտնեա հասկանում եմ գաւառներում այդ դասին վերաբերող կնոջ պարտաւորութիւնը. այն տեղ նրա երեսին պարզ ասում են. «տես, քո աշխարհը այս տունն է, իսկ քո սահմանը—այս տան չորս պատերն են. դու այս տան լաւ կարասիներից մէկն ես. նիստ, կեր, խմիր, բայց ոտքդ տնից դուրս չը պիտի դնես։» Այդ դրութեան մէջ կինը թէև բթամտանում է, անասնանում է, բայց դարձեալ մնում է կին իր նեղ նշանակութեամբ։ Բայց Թիֆլիսում կեանքը և նրա պահանջները բաւական փոխվել են. նա հեռացել է արևելքից, բայց դեռ չէ մօտեցել արևմուտքին։ Կինը այստեղ հագել է եւրոպացու հագուստը, բայց դեռ չէ ստացել նրա կրթութիւնը։ Ես շատ հեռու չեմ գնում, թէ ինչ է կատարվում Եւրոպայում, բայց առանց անուններ յիշելու ցոյց կը տամ մի քանի եւրոպացի կնիկներ Թիֆլիսում, որոնք առաջ ծամագործներ (парикмахерша) էին, քաղցրաւենիք չինողներ էին, և մէկը մի հայ ընտանիքի դաստիարակուհի էր. իսկ այժմ հարստացել են, առևտրական մեծ տներ են բաց արել, գործարաններ ունեն։

Իմ հետազօտութիւնը վերջացնում եմ Թիֆլիսի և գաւառական միջին դասի կանանց վերաբերեալ, մնում է մի քանի խօսք աւելացնել նրանց ծերութեան մասին։ Որպէս առհասարակ կնոջ վիճակը, այնպէս էլ պառաւների դրութիւնը համեմատաբար շատ տարբեր են գաւառներում և Թիֆլիսում։ Գաւառներում երբ կինը ծերանում է, որպէս մի պատկառելի հնութիւն, աւելի յարգանքով են վարվում նրա հետ, մանաւանդ, երբ նա երախտիք ունէր ընտանիքի վրա։ Որդիքը աշխատում են չը վիրաւորել նրան, մանկահասակ հարսները խոնարհվում են նրա առջև։ Գերդաստանի բոլոր անդամները ցանկանում են, որ նա օրհնութիւնը բերանումը մեռնէր. նրա անէծքից վախենում են։ Այդ հասակում պառաւից գործ չեն պահանջում, այլ թոյլ են տալիս առաւօտ և երեկոյ եկեղեցի գնալ, իր հոգու և իր որդիների համար աղօթելու։ Նրան չեն զբաղեցնում մասնաւոր ծախսերից, որ պատկերների համար մոմ գնէր և քահանայի սիրտը շահէր։ (Առհասարակ մեր կանայք սկսում են եկեղեցին յաճախել, երբ մօտենում են գերեզմանին. մանկահասակ կնիկներից չէ պահանջվում ջերմեռանդ լինել, ժամ գնալ, աղօթել)։ Թիֆլիսում, ընդհակառակն, կինը խիստ թշուառ ծերութիւն է ունենում։ Որդիքը վարվում են նրա հետ անգութ կերպով, իսկ հարսները ծեծում են։ Ես տեսել եմ մի քանի օրինակներ, որ որդիները պառաւ մօրը տնից արտաքսել են առանց պատառ հացի։ Մայրը ստիպվել է դիմել դատաստանի և որդիներից ապրուստ պահանջել, որ քաղցած չը մեռնի։ Պէտք է բաւական բարեխիղճ համարել այն որդուն, որ յօժարվել էր յանձնել պառաւ մօրը մի աղքատ ընտանիքում ամսական 15 բուբլիով կերակրելու համար։ Մի սարկաւագի ընտանիքում պատահեց ինձ տեսնել մի այսպիսի պառաւ, որի որդիների համար ասում էին, թէ հարուստ են, երկու տներ ունեն։ Պառաւների այդ ցաւալի վիճակը իմ կարծիքով առաջ է գալիս այն հանգամանքից, որ նրանք, իբրև հին սերունդի ծնացորդներ, անտանելի են լինում ընտանիքի մէջ, որ արդէն փոխել էր իր նահապետական կերպարանքը։ Նրանց կռիւը «մոդնի» հարսների հետ ծագում է գլխաւորապէս այդ հանգամանքից։ Որդին քռնում է իր կնոջ կողմը և մօրը արտաքսում է։ Ծնողները իրանց աղջիկը մարդու տալու ժամանակ միշտ հաշուի մէջ են դնում այն յարմարութիւնը, որ փեսան մայր չունի։ «Մենակ տղայ է—ասում են մայր չունի։» Ծնողները այդ դէպքում ի նկատի ունեն, որ մայր չը լինելու պատճառով իրանց աղջիկը կարող էր կատարելապէս տիրել փեսայի տան վրա. իսկ հարսը իր կողմից ուրիշ հաշիւ ունի, որ ազատ կը լինի, իր վրա հսկող չի լինի։ Գաւառներում, ընդհակառակն, ուրախ են լինում, երբ պառաւ մայրը կար, մտածում են, որ նա խնամք կը տանէր անփորձ հարսի վրա. և նրանք միշտ հաշտ են ապրում, որովհետև թէ հինը և թէ նորը շատ նման են լինում մէկ մէկու։ Բայց Թիֆլիսում որքան ևս անարգված լինէր պառաւ մօր ծերութիւնը, և որքան յօժարութեամբ հանդիպում են նրա մահուանը այսուամենայնիւ, նրա թաղումը կատարվում է բաւական հանդիսաւոր կերպով. այն ժամանակ միայն ցոյց են տալիս, թէ պատում են նրան։ Այդ, ի հարկէ, առաջ է գալիս այն սովորութիւնից, որ մարդիկ եկեղեցական խորհուրդները գործ են դնում իրանց փառասիրութիւնը յագեցնելու համար։

(Կը շարունակվի)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թուին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից:

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՑՆ ԹՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը. Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼՈՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԻՔՈՄԸՆ—ՀԷՆԻՈՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱԼԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԷԿՈՎ:

Լոյս տեսաւ «ՓՈՐՁ» ամսագրի

Երրորդ (մարտի) համարը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. I. Հայի խնդիր. վիպասանութիւն Պերճ Պռօշեանցի, II Հրպատակութեան և խղճի գաղափարը Նախնի հայոց մէջ, Կ. Կոստանեանց, III Մի երես Կարնոյ նորագոյն պատմութիւնից, Ա. Երիցեան, IV Սիրոյ զոհեր, բանաստեղծութիւն Գամառ Քաթիպայի, V Մի Լեհացի Սավոնարոլ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ VI Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, տիկին Սրբուհի Երիցեան, VII անեկդոտներ, ժողովածու Գալուստ Շիրմազանեանի, Գրիչ. VIII Միհրդատ Ամերիկեան, կենսագրութիւն, Գ. Շահկեանց, ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Արևելեան խնդիրը և հայերը, X Ներսէս պատրիարքի կոնդակը: ՑԱՒԵԼՈՒԱԾ XI. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, Ա. Բաբայեան, XII յայտարարութիւններ:

Ստորագրուել կարելի է Թիֆլիսումը՝ «Փորձի» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետեւեալ հասցէով:

Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“.

Խմբագիր—հրատարակիչ Աբգար Յովհաննիսեան

ՌՈՒՍԱՑ ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՅԻՑ նոր ստացվեցան 10000 ֆունտ ֆուչանի և Կեալխաի թէյ սեփական փոխանակութեան 1 ռ. 20 կ. մինչև 8 ռ. ֆունտը: Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ: Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր: Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ: Հասցէն Մկրտչեանի կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ: Վաճառական Ա. Պօլոսովին:

6—10

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիևսկայա փողոցի վրա քաղաքի կենտրոնում ձեռնտու գնով ԾԱԽՎՈՒՄ Է քարից և կրից շինած մի ՏՈՒՆ: Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարանոցներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆՆԱԿ ծառաների բնակարաններով և պաշտամբով տան ամբողջ երկայնութեամբ: ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱՒԱԶԱՆ կայ: Տան դիմացի կողմի ԵՐԿԱՑՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին: Ամբողջ տունը տարեկան 5600 ռ. ԵԿԱՄՈՒՏ է տալիս: Ցիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Արտեմ Պապիկովին: Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշ ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով: ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ:

3—4

Ներկայ մարտ ամսի 9-ին, ցերեկվայ 1 և 3 ժամվայ միջոցում կորցրած է Վօղնեսէնսկի կամ Սադովայա փողոցի վրա մի ՈՍԿԵԱՑ ՔՈՐՈՑ, զարդարված տասնումէկ բրիլիանտներով: Գտնողին խնդրում եմ հայտնել իմ վարչութիւնը յիշեալ քորոցը, որի համար իսկոյն կը տրվի ՀԱՐԻՒՐ ռուբլ վարձատրութիւն:

Թիֆլիսի Աւագ-Պօլիցէյմէյստէր ԳՆԴապետ ՄԵՐԿԼԻՆԳ:

ՍԵՆՆԱԿՆԵՐ քրէհով են տրվում կահկարասիքով և ծառայով 10 ռ. մինչև 20 ռուբլ ամսական վճարով: Հարցնել Սապէօրնայա փողոցի վրա գինուորական դիմնազիայի դիմացը Յարութիւնեանցի № 12 տան մէջ:

1—3

Աղդ

Գառնիկ Ալէքսանդրոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Սիվասցի. Կ. Պոլիս Բերայի Թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անգղիացի վաճառականի մի հետ ապէ (Պոլիսէն) եկած շոգենաւով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ ճամբայ եկած օրէս մինչև յայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի:

ՆՈՒԷՐ քեասիբ գեղջիներին անունով նոր դուրս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում: Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղջում, եթէ անմիջապէս դառնան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову, въ Сололакахъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան:

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայով) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու: Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայով) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին: Հասցէն Սերդիեվսկայա փողոց, տուն Բայանդուրովի:

7—10

ԼԱՐՇԷԻ խանութում Գոլովինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարտիզային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են:

5—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. Спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՑՈՒՄ, Իսարլովսկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ, ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆՆԱԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ և ծառայով: Հարցնել «Մշակի» խմբագրատանը:

3—10

ՄԱՐՏԻ 14. ՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մարտի 13-ին)

	Ռ.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը	8	58
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ածէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	30
» միս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը. .	6	20
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	60
Միս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Աւիւրը Շորագալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մեղաքը Նուխվայ. .	200	—
Կախեթուանը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» Լիանի . . .	22	—
» Մարաին օյին	18	

ՀՆՈՒԱԳԻՐ

	Ռ.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Լուսաստան .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում Թիֆլիսում ամեն օր: Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելոկլիուչի տրակտից երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենէրական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վենէրական և կաշու հ.:

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների.

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան:

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենէրականկաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններից

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄՕՍԿՎԱ.Ն. Նամակը մի քանի փոփոխութեամբ կը տպենք հետեւեալ համարներից մէկում:

—ԳԱՆՁԱԿ. Մ. Յօդուածը չենք տպի, որովհետև ձեր բարբառը մեր ընթերցողների մեծամասնութեան համար հասկանալի չէ:

—ԹԷՀՐԱՆ. Տ. Մ. Նամակը կը տպենք հետեւեալ համարներից մէկում:

—ՍԵՆ-ՂԱՐԱՔԼԻՍԱ. **. Ամուսինների կեանքի այնպիսի բոպէներ էք նկարագրում, որոնք բոլորովին գաղտնի են օտար աչքերի համար:

—ՎԱՆ. Հրանտ. Ստացանք նամակը: Շնորհակալ ենք: կը տպենք հետեւեալ համարներից մէկում:

—Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. ***. Ձեր առաջարկութիւնը չենք կարող ընդունել:

Дозволено Цензурою 13 Марта 1879 г. Тифлисъ Տպարան Գ. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца